ԳԻՏԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔ

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 6-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր հովանավորությամբ, իր աշխատանքը սկսեց Աստվածաշնչի հայերեն թարգմանությանը նվիրված միջազգային գիտաժողովը:

Ե դարում, Հայոց Գրերի Գյուտից անմիջապես հետո, հայ թարգմանիչները ձեռնամուխ եղան Սուրբ Գրքի հայերեն թարգմանությանը, որ հիրավի համարվում է «թարգմանությունների թագուհի»: Հայոց Գրերի Գյուտի 1600-ամյա հոբելյանական տոնակատարությունների շրջանակում կազմակերպված այս գիտաժողովին մասնակցում են Հայաստանի, ինչպես նաև ԱՄՆ և եվրոպական մի շարք հեղինակավոր համալսարանների մեկ տասնյակից ավելի գիտնականներ:

Տերունական աղոթքից և Մայր Աթոռի միաբան ու գիտաժողովի կազմակերպիչ Տ. Վահան վրդ. Հովհաննիսյանի ողջույնի խոսքից հետո գիտաժողովի մասնակիցներին իր օրհնությունը փվեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ ասելով. *«Մեզ համար հոգու առանձնակի խնդություն է Հայ Գրի 1600-ամյա հոբելյանի առիթով Աստվածաշնչի հայերեն թարգմանությանը և հայ հոգևոր գրական ժառանգությանը նվիրված միջազգային այս գիտաժողովի բացումը Սուրբ Էջմիածնի հարկի ներքո:*

Մեր ժողովրդի քրիստոնեական կյանքի ու պատմության անբաժան մասն է կազմում այբբենական Հայ Գիրը, որն ստեղծվեց Աստվածաշունչը հայերենով ուսուցանելու նպատակով: Այդ մեծ նպատակի նախաձեռնողները՝ Սահակ Պարթև Կաթողիկոսը, Մաշտոց Վարդապետը և նրանց համամիտ ու գործակից Վռամշապուհ թագավորը, ջանքեր ներդրեցին աղոթքով ու այն հավատով, որ մայրենի լեզվով Աստծո Խոսքը առավել լսելի դառնալով ժողովրդին, գրվելով սրտերում ու հոգիներում՝ օրհնությամբ է լցնելու նրա կյանքը: Արդարև, հավատի լույսը առատորեն սփռվելով՝ ասպվածճանաչ հոգու անհամար ու անգին պտուղներ պարգևեց հայոց կյանքին՝ աստվածային շնորհ և օրհնություն դարձավ ոսկեդարյան այդ օրերից ի վեր: Սկզբնավորվեց ու անընդմեջ ժառանգականությամբ 16 դարերի մեջ աղոթքով ու անձանձիր ջանքով ստեղծվեց հարուստ գրական ժառանգություն՝ սեփական և թարգմանական, գիտական ու գեղարվեստական:

Գիրն ու դպրությունը մեր ժողովրդի համար դարձան ճանապարհ նախ և առաջ Աստծո Խոսքին ունկնդիր լինելու, Աստծուն ճանաչելու և հավատի մեջ հաստատուն մնալու: Բնական է, որ Աստվածաշունչը, ինչպես ամենուր քրիստոնյա աշխարհում, հայ իրականության մեջ ամենաշատն էր ընդօրինակվում և հետո նաև՝ տպագրվում՝ ջանալով անխաթար պահպանել Ե դարից ավանդված հայե-

րեն «Թագուհի թարգմանությանց» Աստվածաշունչ Մայրյանը: Հավատի լույսը, որ առատաբուխ ճառագում էր մեկնողական, ջատագովական, վարքագրական, պատմական ու բնագիտական-ճանաչողական, այլն՝ գեղարվեստական գրականությունից, մեր ժողովրդի համար եղավ նաև փրկության առագաստ՝ իր դժվարին պատմության փորձություններով մեջ ապրելու և վերածնվելու: Հայրենիքում ապրեց մեր ժողովուրդը, թե հալածանքներից ափոխվեց այլ երկրներում, իր հավատով միշտ միասնական մնաց հայության հոգին, մնաց իր հողի հետ ու աստվածատեր հայրերի, մնաց փրկության հույսի ու հավատի հետ:

Մեզ համար մեծ ուրախություն է, որ գիրաժողովը անդրադառնալով Աստվածաշունչ Մայրյանի հայերեն թարգմանության հարցերին, ինչպես և՝ մեր ժողովրդի հոգևոր գրական ժառանգության տարբեր խնդիրներին, մասնավորելով գիրական առումով դեռևս չուսումնասիրված կողմերն այդ ժառանգության, մեկ անգամ ևս կարևորելու է նրա հոգևոր ու մշակութային արժեքն ու տեղը համաշխարհային մշակույթի ու պատմության մեջ: Մենք հավատում ենք, որ այս գիրաժողովի հրավիրումը հավատի նորոգության առիթ ու խրախույս է դառնալու և դառնալու է հրավեր՝ Աստվածաշունչ Մայրյանը անաղարտ պահպանելու և սերունդներին փոխանցելու:

Գիրաժողովի սիրելի մասնակիցներ, բարի գալուստ ենք մաղթում ձեզ և հաջողություններ՝ գիրաժողովի աշխատանքներին: Գիրաժողովի կազմակերպման համար Հայրապետական Մեր գնահատանքն ենք բերում Հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Հովհաննիսյանին և նրա բոլոր աջակիցներին:

Հայցելով բարեխոսությունը Սուրբ Սահակ և Սուրբ Մաշտոց մեր մեծ Ուսուցչապետների, ոգեկոչելով անմահ հիշատակը հայ գրի ու դպրության նվիրյալների, մեր գրական ժառանգությունը կերտողների, աղոթք ենք բարձրացնում առ Փրկիչ Տերը մեր, որ Իր օրհնության ներքո պահպանի աշխարհը համայն և ազգս հայոց ու պարգևի հավատի, հոգու և մտքի նոր արգասիքներ: Աղոթում ենք, որ Տերը քաջառողջ պահպանի բոլորիդ, շնորհներով զարդարյալ և օրհնի գիրական Ձեր ջանքերը՝ ի սեր մարդկանց ու Իր Սուրբ Անվան:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն»:

Գիրաժողովի առաջին օրը զեկուցումներով հանդես եկան Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Թոմսոնը՝ «Սուրբ Ներսես Լամբրոնացին և Հայտնության գիրքը», Ժենևի համալսարանի պրոֆեսոր Բեռնարդ Ուտիեն՝ «Հովհաննես Իմաստասեր և աստվածաշնչյան խնդիրներ. Սուրբ Գրքի հայկական և վրացական մեկնությունները», Մատենադարանի գիտաշխատողներ Մանեա Շիրինյանը՝ «Սուրբգրային վկայակոչումները վաղ շրջանի հայ մատենագրության մեջ», և Սուսաննա Գրիգորյանը՝ «Աստվածաշնչի հայ միջնադարյան մեկնությունները» թեմաներով:

Գիրաժողովի երկրորդ օրը զեկուցումներով հանդես եկան Գերմանիայի Տյուբինգենի համալսարանի պրոֆ. Գաբրիելլա Վինկլերը՝ «Աստվածաշնչյան վկայակոչումների աստ-

վածաբանական ազդեցությունը Գրիգոր Լուսավորչի կարգավորած Պատարագում», Ֆրանսիայից Հայր Շարլ Ռենուն՝ «Ավագ Ուրբաթին Քրիստոսի գերեզման դրվելու արարողությանը կատարվող սաղմոսների քննություն», Կանադայի Մակգիլ Համալսարանի պրոֆ. Մանուել Ջինբաշյանը՝ ««Ծննդոց գրքի» հայերեն թարգմանության բնագիրը», Երուսաղեմի Եբրայական համալսարանի պրոֆ. Մայքլ Սթոունը՝ «Պարականոն գրքերը և հայկական ավանդությունը», նույն համալսարանի դասախոս փիկ. Նիրա Սթոունը՝ «Դրախտի չորս գետերը հայկական մանրանկարչության մեջ», և Նյու Յորքի Ս. Ներսես ճեմարանի դասախոս Տ. Վահան վրդ. Հովհաննիսյանը՝ «Հանգիստ երանելւոյն Յովհաննու» գործի հայկական խմբագրությունը և նրա հարաբերությունը «Գործք Յովհաննու» պարականոն գրությանը» թեմաներով:

Նիստերի ավարտին գիտաժողովի մասնակիցները ներկա գտնվեցին երեկոյան ժամերգությանը:

Գիտաժողովի երկրորդ օրը զեկուցումներով հանդես եկան ԱՄՆ-ից դոկտ. Ջոզեֆ Ալեքսանյանը՝ ««Գործք առաքելոց»-ի գրաբար բնագիրը և նրա կարևորությունը Նոր Կտակարանի քննական բնագրի պատրաստման համար», Կանադայից Կլոդ Քոքսը՝ ««Հոբ»-ի հայկական քննական բնագիրը», Մատենադարանի գիտաշխատող, «Մատենադարանի բարեկամներ» հիմնադրամի գործադիր տնօրեն Արշակ Բանուչյանը՝ «Եվթաղյան տնատումները Նոր Կտակարանի հնագույն օրինակներում», արվեստաբան Վիգեն Ղազարյանը՝ «Խորանների մեկնությունը Աստվածաշնչի ձեռագրերում» թեմաներով:

Գիտաժողովը փակվեց Հայր Վահանի խոսքով: Հայր Սուրբն իր երախտագիտությունը հայտնեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ գիտաժողովի կազմակերպմանն աջակցելու, և գիտնականներին՝ մասնակցության համար: Նա հույս հայտնեց, որ նման գիտաժողովներ պարբերաբար կկազմակերպվեն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո և կհամախմբեն հայագետներին:

Գիտաժողովի մասնակիցները այնուհետև մեկնեցին Օշական, ուր մասնակցեցին Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում մատուցվող Սուրբ և Անմահ Պատարագին: Սրբազան Պատարագից հետո ներկա գտնվեցին եկեղեցու բակում գետեղված խաչքար-տառերի օրհնության արարողությանը:

Հոկտեմբերի 9-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց հոկտեմբերի 6-8-ը Մայր Աթոռում կայացած Աստվածաշնչի հայերեն թարգմանությանը նվիրված միջազգային գիտաժողովի մասնակիցներին՝ գիտաժողովի կազմակերպիչ Տ. Վահան վրդ. Հովհաննիսյանի ուղեկցությամբ:

Ողջունելով գիտաժողովի մասնակիցներին՝ Հայոց Հայրապետը բարձրորեն գնահատեց գիտնականների նպաստը հայագիտությանը: Նորին Սրբությունը նշեց նաև, որ նմանատիպ հանդիպումներն այսուհետ ավելի հաճախ պետք է կազմակերպվեն Սուրբ Էջմիածնում: *«Տաանամյակներ շարունակ զրկված ենք եղել անվանի գիտնականների հետ շփվելու, նրանց գիտելիքներից ու գիտական փորձառությունից օգտվելու հնարավորությունից: ...Ձեր ներկայությունն այստեղ վստահաբար իր դրական*

անդրադարձն է ունենում ինչպես մեր հավատավոր զավակաց, այնպես և մեր երիտասարդ հոգևորականների կյանքում»,- ասաց Նորին Սրբությունը:

Գիտնականների անունից Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ օրհնության, բարձր հովանավորության և Մայր Աթոռում հյուրընկալության համար, որդիական իր երախտագիտությունը հայտնեց Վահան Հայր Սուրբը:

Հանդիպմանն անդրադարձ եղավ նաև երիտասարդ միաբանների ուսմանը: Նշվեց, որ ավելի քան քսան երիտասարդ եկեղեցականներ ուսանում են ԱՄՆ-ի և Եվրոպայի տարբեր համալսարաններում, իսկ հինգ միաբաններ, համալրելով իրենց կրթությունը Եվրոպայի տարբեր բարձրագույն կրթական հաստատություններում, արդեն իրենց ծառայությունն են բերում Մայր Աթոռի համապատասխան կառույցներում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ